ՏԱՐՈՆ ԱԲԵՂԱ ՂՈՒԼԻԿՅԱՆ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՕՐԱՑՈՒՅՑԸ ԵՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Խորհրդային իշխանության հաստատումից անմիջապես հետո Մայր Աթոռի միաբանությունը և անձամբ Գևորգ Ե Կաթողիկոսը միջոցներ են ձեռնարկում՝ վերահրատարակելու «*Արարատ*»-ը։ Սակայն կյանքն այլ խնդիրներ էր առաջադրում, ինչն էլ Մայր Աթոռից պահանջում էր պարբերաթերթ՝ օրվա շնչին ու հրատապությանը համահունչ, քանի որ վերջինս ևս պետք է արձագանքեր այդ խնդիրներին։ Ահա այս պատճառով արդեն նպատակահարմար է նկատվում հրատարակել շաբաթաթերթ և այն կոչել «*Էջմիածին*»։

Մայր Աթոռի 1937 թ. նահատակված միաբաններից Արտակ եպս. Սմբատյանցը «*Սուրբ Էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունեությունը*» ուսումնասիրությունում «*Էջմիածին*» շաբաթաթերթի հրատարակվելու մասին գրում է. «*Շատ բնական է, որ նման պայմանների մեջ, երբ հայ ազգի գլխին մահվան սուրն էր շողշողում, Մայր Աթոռի տպարանն այլևս նախկին թափով չէր կարող աշխատանք առաջ տանել։ ...1920 թվի հունվարից, սկսեց լույս տեսնել «Էջմիածին» շաբաթաթերթը։ Սա էլ յուր գոյությունը պահպանեց մի քանի ամիս և նույն թվի վերջերին բոլորովին դադարեց*»[1]։

Այսպիսով՝ 1920 թվականի հունվարից, մեծ ջանքերի գնով, միաբանական ժողովի որոշմամբ և Գևորգ Ե Սուրենյանց (1911-1930 թթ.) երջանկահիշատակ Կաթողիկոսի «*բարեհաճ հաստատությամբ*» Մայր Աթոռում սկսեց լույս տեսնել «*Էջմիածին*» շաբաթաթերթը, որը թեև «*պետք է շաբաթը կամ երկու շաբաթը մի անգամ լույս տեսներ, սակայն տպարանական ծախքերի մեծանալու և թերթի քիչ տարածելու պատճառով սկսեց լույս տեսնել գրեթե ամիսը մի անգամ*»[2]։

Ցավոք, լույս է տեսնում պաշտոնաթերթի ընդամենը տասներկու համար՝ ներկայացնելով Հայոց Եկեղեցու և մասնավորապես Մայր Աթոռի գործունեությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կյանքը՝ իր վերաբերմունքն արտահայտելով վարվող արտաքին և ներքին քաղաքականության ամենատարբեր հարցերի վերաբերյալ։

Թեև Եկեղեցին ողջունում էր երկրի ու ժողովրդի վերքերի ամոքմանը, գիտության և մշակույթի առաջընթացին նպատակամղված խորհրդային իշխանության բոլոր

---

[1] **Արտակ եպս. Սմբատյանց**, Սուրբ Էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունեությունը եւ Մայր Աթոռի տպարանը, Ս. Էջմիածին, 1973, էջ ։

[2] **Սանդրո Բեհբուդյան,** Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, գիրք Ե, էջ 511-512։

քայլերը, այնուամենայնիվ, խորհրդայնացման առաջին իսկ օրերից, բոլշևիկները շեշտված բացասական ու անհանդուրժող դիրք գրավեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ: Վերջինս պայմանավորված էր ոչ թե Մայր Աթոռի քաղաքական կողմնորոշումներով, այլ իրենց ծավալած հակակրոնական պայքարով և այն ըմբռնմամբ, թե հոգևորականները ևս ժողովրդի թշնամիներն են ու նրան շահագործողները:

Առաջին իսկ դեկրետներով նրանք ոչ միայն ազգայնացրեցին վանքապատկան կալվածքները՝ կտրելով Մայր Աթոռի գլխավոր եկամուտները, այլև արդեն 1920 թ. դեկտեմբերին բռնագրավեցին Էջմիածնի տպարանը՝ զրկելով նաև հոգևոր գրականություն և պարբերականներ տպագրելու հնարավորությունից[3]: Անհրաժեշտ է նշել, որ ինչպես Էջմիածնի պաշտոնական ամսագիրն էր իր բարձր մակարդակով առանձնանում արևելահայ մամուլի ընտանիքում, այնպես էլ նույն այս միջավայրում տպագրական լավագույն սարքավորումներն ուներ 1771 թ. Սիմեոն Երևանցու կողմից հիմնված և բուն Հայաստանում առաջինը գործել սկսած Մայր Աթոռի այս տպարանը:

Թե պոլիգրաֆիական ինչ մակարդակի էր հասել այն 1910-ական թթ., վկայում են Խորեն, Գևորգ և Բագրատ արքեպիսկոպոսների՝ 1921 թվականի սեպտեմբերի վեցին ՀԱԽՀ Ժողկոմխորհին գրած բողոք-զեկուցագրի հետևյալ տողերը. «*Կառուցվել է նոր հարմարավետ շենք և բերվել են արագատիպ մեքենաներ:*

Տպագրվել են բազմաթիվ եկեղեցական, պատմական ու կրոնա-բարոյական բովանդակությամբ գրքեր, հայրապետական շրջաբերական կարգադրություններ, կոնդակներ և հրահանգներ հոգևոր–վարչական հաստատությունների ու պաշտոնյաների համար, հայագիտական ուսումնասիրություններ, միաբանների աշխատությունները և այլն: Հրատարակվել են «Արարատ» և «Էջմիածին» ազգային-հոգևոր թերթերը մինչև մեծամասնականների[4] *գալը*»[5]:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի լիազոր-ներկայացուցիչները բողոքի իրենց զեկուցագրի այս բաժնում այնուհետև ասում են. «*Էջմիածինը իրավունք և պատրաստակամություն ունի այսուհետև ևս հրատարակելու Էջմիածնի իր տպարանում Հայաստանի, Ռուսաստանի, Պարսկաստանի, Տաճկաստանի և այլ հայաբնակ գաղութների եկեղեցիների համար եկեղեցական-կրոնական գրքեր և հայրապետական կարգադրություններ ու կոնդակներ:*

Ուստի Էջմիածնին պետք է վերադարձնել իր տպարանը հարակից մասերով՝ ձուլարանով, գրապահեստով և թղթապահեստով»[6]:

Հատկանշական է, որ տպարանը, ուր առաջին հերթին տպագրվում էին Մայր Աթոռի պաշտոնական ամսագիրն ու օրացույցը, Գևորգ Զ-ի լիազոր ներկայացուցիչնե-

---

[3] Տե՛ս Վավերագրեր, (1921-1938 թթ.), Երևան, 1994, էջ 26:

[4] Բոլշևիկների:

[5] Նույն տեղում, էջ 16-17:

[6] Նույն տեղում:

ը համարում են Ս. Էջմիածնի՝ անմիջականորեն Կաթողիկոսի իրավասության ներքո գտնվող կարևորագույն չորս հաստատություններից մեկը՝ գրելով.

«*Վերոհիշյալ չորս հոգևոր կրթական-կուլտուրական հաստատությունները (Հոգևոր Ճեմարան, Մատենադարան, թանգարան ու տպարան), որպես համազգային հաստատություններ, անմիջապես կապված համազգային կրոնական հաստատության՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ, միշտ գտնվել են Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի իրավասության ու անմիջական կառավարության և առանձին խնամքի ու հոգածության ներքո, կից Մայր Աթոռին ու Վեհարանին և հեռու որևէ կուսակցական ազդեցությունից, զերծ ու ազատ ամենայն օտարամուտ տիրապետությունից*»[7]:

Եկեղեցական ավանդույթով Սուրբ Էջմիածնի և ընդհանրապես նվիրապետական Աթոռների պաշտոնական պարբերականները եթե ներկայացնում էին տվյալ Աթոռի ամենամսյա կյանքը, ապա սկսվող յուրաքանչյուր տարվա նախօրեին տպագրվող օրացույցները՝ առաջիկա տարվա տոները: Միաժամանակ որոշակի տեղեկություններ հաղորդելով տվյալ Աթոռի միաբանական կյանքի մասին՝ նրանք վերածվում էին նաև մամուլի գործառույթ կատարող յուրօրինակ պարբերականների:

Գրքերի և պարբերականների միջև նրանց գրված միջանկյալ դիրքն է վկայում այն իրողությունը, որ հաճախ, պարբերականների նման, օրացույցների տիտղոսաթերթերին ևս գրվում էր, թե տվյալ տարվա տպագրությունն այդ օրացույցի հրատարակության որ տարում է լույս տեսել, ինչպես թերթերի և ամսագրերի վրա է գրվում հրատարակության այսինչ տարի:

Նաև նկատի ունենալով այն ժամանակվա եկեղեցական օրացույցների թեմատիկ լայն ընդգրկումը՝ կարող ենք ասել, որ եթե պաշտոնաթերթերը ներկայացնում էին արդեն տեղի ունեցած դեպքերն ու իրադարձությունները, ապա օրացույցները եկեղեցական-տոնական առումով գրում էին տեղի ունենալիքի մասին, ինչպես նաև արձանագրում միաբանության վիճակը լույսընծայման պահին:

Բուն եկեղեցագիտական առումով ամենօրյա եկեղեցական կյանքը կազմակերպելու և տոմարական հաշվումներում չսխալվելու համար, օրացույցի դերն անհամեմատ կարևորվում էր վանական մյուս հրատարակություններից՝ դառնալով նաև հավաստումը կատարվող տոների ու արարողությունների ընթացքի որոշման հարցում եկեղեցական բարձրագույն իշխանության իրավունքների:

Ահա այս պատճառով Մայր Աթոռի հոգևոր բարձրագույն իշխանությունը տեսնելով, որ տիրող մթնոլորտում իրական չէ ամսագրի հրատարակումը, իսկ «Էջմիածին» պաշտոնաթերթն արդեն փակվել էր, փորձում է նախ ամենամյա օրացույցը տպագրել՝ վերջինիս վերապահելով տարեգրքային ընդհանրացմամբ ամսագրային որոշ գործառույթներ: Խորհրդային Հայաստանի իշխանությունները, սակայն, նման տարբերակի հետ իսկ հեշտությամբ չեն համաձայնվում:

Սկզբնապես մերժելով 1922 թ. օրացույցը տպագրելու Մայր Աթոռի դիմումը՝ լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանը հիշյալ դիմումի վրա մակագրում է. «*Տպարանական*

[7] Նույն տեղում:

եւ այլ միջոցների սղութեան պատճառով մերժել։ Առաջարկել Կաթողիկոսական դիւանին միջոցներ ձեռք առնել Օրացոյցը տպագրել արտասահմանում, օրինակ՝ Կ. Պոլսում»[8]։

Այնուհետև օրացույցը տպագրվում է Ժողկոմխորհին ուղղված մի քանի բողոքներից հետո, և այն լույս է տեսնում ժամանակին[9]։

Հաջորդ տարիներին ևս օրացույցի տպագրությանը խոչընդոտներ են հարուցվում։ Այս հարցը քննվում է նաև 1928 թ. նոյեմբերի 11-ին Վեհարանում Գևորգ Ե Կաթողիկոսի՝ չեկայի նախագահ Ս. Մելիք–Հովսեփյանի հետ ունեցած զրույցի ժամանակ, որի մեքենագիր սղագրությունը պահպանվել է Պետական արխիվում։

Կաթողիկոսն իր վրդովմունքը հայտնելով տպագրությունից հետո 1928 թ. օրացույցի վրա դրված արգելքի և որոշ էջեր կտրելուց հետո նոր միայն թույլատրելու համար, այնուհետև ասում է, որ հաջորդ տարվա օրացույցի համար «*առաջարկվում է հանել՝ Էջմիածնի պատկերը, իմ հրամանով տպագրվելու մակագրությունը, իմ տիտղոսից Ամենայն Հայոց բառերը, միջոցների և տոների ցուցակը, միաբանությունների ցանկը և այլն։*

Ինչո՞ւ պետք է հանել Էջմիածնի պատկերը, չէ՞ որ օրացույցը Էջմիածնինն է։

Մի՞թե պարզ չէ, որ օրացույցը հոգևորականների համար է և իր մեջ պարունակում է Հայ Եկեղեցու ժամերգությունը, որը անպայման պետք է ունենա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հաստատությունը։ Ամենայն Հայոց Կաթողիկոս տիտղոսը պատմական է և ոչ մի Կաթողիկոս իրավունք չունի հրաժարվելու այդ տիտղոսից։ Միաբանությունների ցանկը միշտ եղել է Էջմիածնի օրացույցների մեջ, այդ ցուցակով շեշտվում է Հայ Եկեղեցու ամբողջությունը, և ես կարծում եմ, որ այդ կառավարության համար պետք է ցանկալի լինի»[10]։

Այս զրույցից լավագույնս երևում է, թե Մայր Աթոռը ինչ կարևորություն է ընծայում Օրացույցի հրատարակմանը, որպես ամսագրին մասնակիորեն փոխարինող ամենամյա յուրօրինակ պարբերականի, որն անհրաժեշտ տեղեկություններ է հաղորդում Մայր Աթոռի մասին։

Ինչ վերաբերվում է Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռների միաբանությունների ցանկի տպագրությանը, որով Հայ Եկեղեցին ներկայացվելու էր իր ամբողջության մեջ, բացի ընթերցողների համար ունեցած տեղեկատվական կարևորությունից, այն ազգային-եկեղեցական մի այլ խորհուրդ էլ էր պարունակում՝ շեշտելով Ս. Էջմիածնի հովանու ներքո Հայոց Եկեղեցու հոգևոր միությունը։ Այս իրողությունն էր անհանգստացրել անվտանգության մարմինների ղեկավարներին։

Գևորգ Ե Կաթողիկոսը, սակայն, նրբին մի դիվանագիտությամբ չեկայի նախագահին ակնարկում է, որ պետք չէ վախենալ Ս. Էջմիածնի ներքո հայ ժողովրդի հոգևոր միության գաղափարի շեշտումից, այլ, ընդհակառակը, այն Սփյուռքի հայության վրա

---

[8] Վավերագրեր, հտ. Բ, Խորեն Ա Մուրադբեկյան, Երեւան, 1996, էջ 123։

[9] Տե՛ս Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, հտ. Ա, էջ 26։

[10] Նույն տեղում, էջ 161-162։

ազդող մի լծակ է խորհրդային իշխանությունների համար։

Ի դեպ այս իրողությունը թե՛ Գևորգ Ե և թե՛ նրան հաջորդած Խորեն Ա Կաթողիկոսները քանիցս շեշտել ու օգտագործել են ճակատագրական այն պահերին, երբ սպառնալիքի տակ է դրվել Էջմիածնի գոյությունն իսկ։ Հայոց Հայրապետները զգուշացրել են, որ Մայր Աթոռի վերացմամբ Հայ Եկեղեցին չի վերանա, այլ նրա հոգևոր կենտրոնը կփոխադրվի արտասահման, ու Խորհրդային Միությունը կկորցնի սփյուռքահայության վրա ազդող իր ունեցած կարևոր այդ լծակը։

Հայ Եկեղեցու և բռնադատված հոգևորականների պաշտպանության հարցում անանահանջ դիրք գրաված Խորեն Ա Կաթողիկոսը պայքարում է գոնե օրացույցի տպագրությունը շարունակելու համար։ Վերջինիս տպաքանակը կրճատելու փորձերից վրդովված՝ նա 1936 թ. փետրվարի երեքին դիմում է Անդրկովկասի ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի Հայաստանի վարչության պետ Խաչիկ Մուղդուսուն։

Մինչև 1932 թ. Մայր Աթոռը օրացույցը տպագրել է 8.000 օրինակով, իսկ 1931 թ.՝ երեք հազարով, որն էլ իր հերթին պահանջվում է կրճատել վեց անգամ[11]։ Նման պահանջն անընդունելի է համարում Կաթողիկոսը, քանի որ օրացույցն էր մնացել Մայր Աթոռի վերջին պատգամաբերը՝ ամսագրի փակվելուց հետո, ինչպես նաև Ս. Էջմիածնի հարկադրական լռության պայմաններում։

Սփյուռքահայության համար այս լռությունը մասնակիորեն ցրվեց շնորհիվ Երուսաղեմի Հայոց Պատրիարքության 1927 թ. հրատարակվող «*Սիոն*» և 1932 թ. լույս տեսնող Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության «*Հասկ*» ամսագրերի։

«*Սիոն*»-ն առանձնակի մի հմայք ձեռք բերեց հատկապես Թորգոմ արքեպս. Գուշակյանի պատրիարքության շրջանում։ Ինչպես Օրմանյանի «*Ազգապատումի*» շարունակության մեջ գրում է Զավեն ավագ քահանա Արզումանյանը, «*Սիոն*»-ի գերազանց խմբագիրն էր նույն ինքը՝ Պատրիարքը, իր գրական սքանչելի ոճով և վերլուծական կիրթ վարպետությամբ. «*Սիոն» Թորգոմ Պատրիարքի օրով յիրաւի ապրեցաւ իր փառաւոր տարիները մեծանուն արմաշականին անմիջական հոգածութեանը ներքեւ, ուր ան գրեց երկարաշունչ խմբագրականներ, քարոզներ, բանաստեղծութիւններ, թարգմանութիւններ, նշումներ, քննադատականներ եւ գրախօսականներ*»[12]։

Զավեն ավագ քահանան այնուհետև ավելացնում է. «*Ինք եւս հետեւելով իր նախորդին, իր տիրական եւ ինքնատիպ ձայնը բարձրացրեց ի շահ եւ ի պաշտպանութիւն Մայր Աթոռին*»[13]։

«*Սիոն*»-ում էին տպագրվում հայրապետական կոնդակները, շրջաբերականներն ու մյուս պաշտոնական գրությունները, լուսաբանվում ազգային-եկեղեցական նշանակալից իրադարձությունները և քննարկվում կրոնական-եկեղեցագիտական հարցերը։

---

[11] Նույն տեղում, էջ 293։

[12] **Զաւեն աւագ քհն. Արզումանեան,** Ազգապատում, հտ. Դ, գիրք Բ, Նիւ Եորք, 1997, էջ 193։

[13] Նույն տեղում։

Էջմիածնի համար ամենածանր այս շրջանում իսկ, հավաստելով իր որդիական հավատարմությունը Հայոց Եկեղեցու Ընդհանրական Աթոռին ու նրա գահակալին, այն խոստովանում է նաև ինքը՝ Երուսաղեմի երանաշնորհ Պատրիարքը։

Այսպես՝ Խորեն Ա Մուրադբեկյանի ընտրությունից անմիջապես հետո, Գարեգին արքեպս. Հովսեփյանին ուղղված շնորհակալական նամակում, Գուշակյանը, խնդրելով կաթողիկոսական ընտրության նկարագրականը «*Միոն*»-ում տպագրելու համար, նաև ասում է. «*Միոն» ազգին զգացմանց առջեւ, իբրեւ Եկեղեցւոյ եւ կրօնի օրկան, ունի իր կարեւոր նշանակութիւնը՝ անոր մէջ հրատարակած յօդուածները եւ տեղեկութիւնները վստահութեամբ կը՛ընդունուին ամբողջ ազգէն. կը փափաքինք, որ «Միոն» ծառայէ նաեւ եւ մանաւանդ Էջմիածնի*»[14]։

Հայոց Եկեղեցու դեմ ծավալված բռնությունների բարձրակետը դարձավ Խորեն Ա Մուրադբեկյանի սպանությունը Վեհարանի իր սենյակում։ Նահատակ Կաթողիկոսի կենդանության ժամանակ կատարված հայրապետական տնօրինությամբ իր մահից հետո կաթողիկոսական տեղապահ է դառնում Գևորգ արքեպս. Չորեքչյանը (ապագա Գևորգ Զ Կաթողիկոսը)։ Ծանրագույն այս օրերին, երբ Հայաստանի կուսակցական ղեկավարությունը Մոսկվա գրած դիմումով առաջարկում էր Ս. Էջմիածինը վերածել թանգարանի, Մայր Աթոռի պահպանության ջանքերին զուգընթաց, տեղապահի՝ պետական մարմիններին ուղղված առաջին դիմումները վերաբերում են նաև ամսագրի և օրացույցի հրատարակությանը։

Գևորգ Ե և Խորեն Ա Կաթողիկոսների նման նա ևս խորհրդային իշխանության տեսանկյունից է փորձում հիմնավորել օրացույցի տպագրության անհրաժեշտությունը՝ գրելով, որ այս հարցը «*ոչ այնքան եկեղեցական, որքան քաղաքական խնդիր է*»։

Նաև շեշտում է, թե Էջմիածնի եկեղեցական օրացույցը կազմված է այնպես, որ «*հոգևորականների ձեռքում ուղեցույց է ե՛ւ կանոնակարգի կատարման, ե՛ւ Հայ Եկեղեցու արարողությունների միասնության պահպանման, փոխարինում է Էջմիածնի շրջաբերական հրամաններին։ Ուստի սփյուռքահայերի վրա Ամենայն Հայոց Կաթողիկոսի իշխանությունը պահպանելու տեսակետից ցանկալի է օրացույցը տպագրել այստեղ՝ Խորհրդային Հայաստանում, Կաթողիկոսի հրամանով։*

Երկրորդ՝ Էջմիածնի օրացույցը տարածվում է աշխարհով մեկ և սփյուռքահայերին հիշեցնում Էջմիածնի հնավանդ Մայր Աթոռի և Ամենայն Հայոց Հայրապետի մասին, ինչով կապ է ստեղծում արտերկրի հայության և Էջմիածնի ու Հայրենիքի միջև։ Աշխարհասփյուռ հայությանը զրկել կենտրոնամետ ձգողական ուժից, օգտավետ չէ ո՛չ Էջմիածնի, ո՛չ Խորհրդային Հայաստանի համար։

Երրորդ՝ օրացույցի տպագրությունը թույլատրելը Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական մենաշնորհն է։ Եվ եթե Կիլիկիո, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի պատրիարքները օրացույց են տպում միայն իրենց թեմերի համար. այն էլ Կաթողիկոսի՝ նրանց տված թույլտվության հիման վրա, ապա օրացույցը չտպելով՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն աննկատ զրկվում է իր գերակայությունից, որով ընկնում է

[14] Վավերագրեր, հտ. Բ, էջ 344։

նրա վարկն ու պատիվը սփյուռքի հոգևորականության և հավատացյալների աչքում, ինչը ցանկալի չէ»[15]:

Ծավալուն այս մեջբերումը նախ հստակորեն վկայում է, որ օրացույցը փաստորեն կատարել է նաև ամսագրի գործառույթները: Օրացույցի հրատարակությունը կարևորվում է թվարկվող երեք պատճառներով, որոնցից յուրաքանչյուրի վերջում շարունակ նշվում է Ս. Էջմիածնի ու պետական իշխանությունների շահերի համընկնումն այս հարցում:

Այսինքն՝ որքան բարվոք և ուժեղ լինի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, այնքան ավելի լավ կարող է իրականացնել հոգևոր կենտրոնաձիգ իշխանության իր գործառույթը և ներազդել արտասահմանի հայության վրա, իսկ այդ ազդեցությունը միայն հօգուտ խորհրդային իշխանության կարող է լինել:

Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրերից, դատապարտելով ֆաշիստական Գերմանիայի հարձակումը և աշխարհի հայությանը կոչ անելով գործուն մասնակցություն ցուցաբերել ֆաշիզմի ջախջախմանը և կարմիր բանակին օգնելուն[16], այնուհետև կազմակերպելով «*Սասունցի Դավիթ*» տանկային շարասյան համար անհրաժեշտ միջոցների հանգանակությունը, Գևորգ Զ Կաթողիկոսը գործնականորեն ապացուցեց աշխարհասփյուռ հայության վրա ներազդելու Ամենայն Հայոց Կաթողիկոսության հոգևոր զորեղ լծակներ ունենալը:

Մայր Աթոռի համար բախտորոշ եղավ և այն հանգամանքը, որ պատերազմի տարիներին ողջ Խորհրդային Միությունում էականորեն փոխվեց վերաբերմունքը կրոնի և Եկեղեցու հանդեպ:

Այսպիսով՝ եթե Գևորգ Ե և Խորեն Ա Կաթողիկոսները հայության վրա Էջմիածնի ունեցած ազդեցությունը շեշտում էին հանուն Մայր Աթոռի պահպանության, ապա 1941 թ. ազգային-եկեղեցական ժողովում ազգընտիր տեղապահ դարձած Գևորգ արքեպս. Չորեքչյանը, քաղաքական առումով ստեղծված նոր և անհամեմատ առավել բարենպաստ պայմաններում արդեն այս գործոնը ներկայացնում է ոչ թե Մայր Աթոռի պահպանության, այլ վերցված իրավունքների աստիճանական վերականգնման համար, և առաջին ձեռնարկումներից մեկը դարձյալ վերաբերվում է Մայր Աթոռի պաշտոնական ամսագրի հրատարակությանը:

---

[15] Վավերագրեր, գիրք Զ, **Գէորգ Զ Չորեքչեան Կաթողիկոս Ամենայն Հայոց**, 1999, էջ 28:

[16] Տե՛ս նույն տեղում, էջ 123-124: